Հաստատված է ՀՀ քաղաքաշինության,
տեխնիկական և հրդեհայինանվտանգության
տեսչականմարմնիղեկավարի
2019թ. 12մարտի8-Լիրամանով

# Ա Կ Տ N 26

## ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ

«08» նոյեմբերի 2019թ.

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 41-րդ հոդվածի և <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով մենք՝ ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության պետի տեղակալ Արմեն Չատինյանը, գլխավոր մասնագետ Արամ Վարդամյանը և առաջատար մասնագետ Կարեն Հարությունյանը 2019թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում ենք իրականացրել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում ՀՀ Վարչապետի կողմից համաձայնեցված գրաֆիկի համաձայն ՀՀ հողային օրենսդրության պահանջների պահպանման համապատասխանության նկատմամբ:

Համայնքում իրականացված փաստաթղթերի ստուգմամբ և տեղազննությամբ պարզվեց հետևյալը.

Սխալ է կազմված համայնքի հողային հաշվեկշիռը, որը հետագայում դառնում է մարզի և այնուհետ հանրապետության հողային հաշվեկշռի մի մասը, իսկ համայնքի կողմից ներկայացված հողային հաշվեկշիռը չի ընդունվել:

**1.** Համայնքում փաստաթղթերի ուսումնասիրությունից և տեղազննությունից պարզվել է, որ.

1) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Կողես գյուղում <<Մուլտի գրուպ կոնցեռն>> ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող 1,05հա մակերեսով (ծածկագիր

06-056-0111-0002) գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասում առանց որևիցէ օրինական և նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ փաստաթղթերի առկայության ինքնակամ կառուցվել է ոսկու հանքի արդյունաբերական գործունեության պոչամբար:

2) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Կողես գյուղում <<Մուլտի գրուպ կոնցեռն>> ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող 0,69հա մակերեսով (ծածկագիր 06-056-0111-0004) գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասում առանց որևիցէ օրինական և նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ փաստաթղթերի առկայության ինքնակամ կառուցվել է ոսկու հանքի արդյունաբերական գործունեության պոչամբար:

3) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Կողես գյուղում քաղաքացի Ռազմիկ Մաթևոսյանին վարձակալության իրավունքով պատկանող 1,47հա մակերեսով (ծածկագիր 06-014-0105-0017) գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասում առանց որևիցէ օրինական և նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ փաստաթղթերի առկայության ինքնակամ տնկվել է անտառ:

4) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Բովձոր գյուղում համայնքային (ծածկագիր 06-025-0516-0001) գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ գործառնական նշանակության հողամասում առանց որևիցէ օրինական և նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ փաստաթղթերի առկայության կառուցվել է ինքնակամ շինություն:

Վերոնշյալ հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու վերաբերյալ փաստաթղթեր չեն ներկայացվել:

Խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի (Համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ) և 2-րդ կետի (Համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված

դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:) պահանջները:

**1.** Կետում խախտվել է ՀՀ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ> օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝ հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, հողամասերի գործառնական նշանակության և հողատեսքերի ինքնակամ փոփոխությունը չկանխելը, պաշտոնատար անձանց նկատմամբ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի **հարյուրհիսնապատիկի** չափով:

**2.** Համայնքում փաստաթղթերի ուսումնասիրությունից և տեղազննությունից պարզվել է, որ.

1) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Լոռի Բերդ գյուղում համայնքի ղեկավարի 23.08.2017թ. N22 որոշմամբ աճուրդում հաղթող ճանաչված Սերյոժա Մկրտումյանին 0.11927հա մակերեսով (ծածկագիր՝06-044-0011-0021) օտարվել է բնակավայրերի նպատակային նշանակության, բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամաս:

2) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Լոռի Բերդ գյուղում համայնքի ղեկավարի 23.08.2017թ. N21 որոշմամբ աճուրդում հաղթող ճանաչված Վազգեն Պապիկյանին 0.32419հա մակերեսով (ծածկագիր՝06-044-0011-0024) օտարվել է բնակավայրերի նպատակային նշանակության, բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամաս:

3) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Լոռի Բերդ գյուղում համայնքի ղեկավարի 23.08.2017թ. N23 որոշմամբ աճուրդում հաղթող ճանաչված Տիգրան Բաղոյանին 0.20235հա մակերեսով (ծածկագիր՝06-044-0011-0022) օտարվել է բնակավայրերի նպատակային նշանակության, բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամաս:

4) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Լոռի Բերդ գյուղում համայնքի ղեկավարի 23.08.2017թ. N24 որոշմամբ աճուրդում հաղթող ճանաչված Կիմիկ Սերոբյանին 0.05968հա մակերեսով (ծածկագիր՝06-044-0011-0023) օտարվել է

բնակավայրերի նպատակային նշանակության, բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամաս:

5) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Ագարակ գյուղում համայնքի ղեկավարի 25.05.2019թ. N94-Ա որոշմամբ աճուրդում հաղթող ճանաչված Արթուր Չոբանյանին 0.0091հա մակերեսով (ծածկագիր՝06-009-0037-0028) օտարվել է բնակավայրերի նպատակային նշանակության, բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամաս:

6) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Ագարակ գյուղում համայնքի ղեկավարի 25.05.2019թ. N95-Ա որոշմամբ աճուրդում հաղթող ճանաչված Արտակ Անտոնյանին 0.00725հա մակերեսով (ծածկագիր՝06-009-0037-0027) օտարվել է բնակավայրերի նպատակային նշանակության, բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամաս:

5) Համայնքի վարչական սահմաններում գտնվող Ագարակ գյուղում համայնքի ղեկավարի 25.05.2019թ. N96-Ա որոշմամբ աճուրդում հաղթող ճանաչված Արտակ Անտոնյանին 0.0706հա մակերեսով (ծածկագիր՝06-009-0037-0025) օտարվել է բնակավայրերի նպատակային նշանակության, բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողամաս:

Հողամասերը վաճառվել են առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրելու:

Խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 57-րդ հոդվածի 2-րդ կետերը և ՀՀ կառավարության 12.04.2001թ. <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> N 286 որոշման 3-րդ կետի ա) ենթակետի պահանջները՝ համաձայն որի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարումը, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրումն իրականացվում է բացառապես հողերի օգտագործման սխեմաներով, անտառաշինարարական նախագծերով, բնակավայրերի գլխավոր հատակագծերով, մանրամասն հատակագծման նախագծերով, գոտևորման նախագծերով, դրանց բացակայության

դեպքում՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներով նախատեսված նպատակներով օգտագործելու համար:

**2.** Կետում խախտվել է ՀՀ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> օրենսգրքի **56**[2]-րդ հոդվածի համաձայն պետական կամ համայնքային սեփականության հողամասերը քաղաքաշինական, հողաշինարարական, անտառշինական կամ ջրաշինարարական նախագծերին չհամապատասխանող նպատակային կամ գործառնական նշանակությամբ օտարելը առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի **երկուհարյուրապատիկի** չափով:

Ա. Չատինյան

Ա. Վարդամյան

Կ. Հարությունյան

Համայնքի ղեկավար՝